ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1247-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 765-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 15-ի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին» N 765-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Ա. Հարությունյան - ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական» բառերը փոխարինել «Ա. Հարությունյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար» բառերով.

2) «Ս. Կարաբեկյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական» բառերը փոխարինել «Ս. Կարաբեկյան - ՀՀ ԳԱԱ գիտական կադրերի պատրաստման ծրագրերի բաժնի պետ (համաձայնությամբ)» բառերով.

3) «Ա. Ավագյան - «ICOM ARMENIA»-ի (International Council of Museums) նախագահ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Ա. Ավագյան - «Հայկական ժառանգություն» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ